«Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ին պատկանող շարժական գույքերը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին

2026-11-27 12:39:25

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

2026 թվականի նոյեմբերի 24-ին, ժամը 12:00-ին «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խ.Նազարյանի կողմից ք.Երևան, Ազատության 14-54 հասցեում /կառավարիչի գրացենյակ/ հայտարարված ՀՀ Սնանկության դատարանի վճռով թիվ ԵԴ0809/04/18 սնանկ ճանաչված «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ին պատկանող շարժական գույքերի 1 առաջին աճուրդը չի կայացել հայտեր չլինելու պատճառով :
2026 թվականի դեկտեմբերի 24-ին , ժամը 13:00-ին «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խ.Նազարյանի կողմից ք.Երևան, Ազատության 14-54 հասցեում /կառավարիչի գրացենյակ/ կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի վճռով թիվ ԵԴ0809/04/18 սնանկ ճանաչված «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ին պատկանող շարժական գույքերի կրկնաճուրդը ՝ համաձայն ՀՀ Սնանկության դատարանի կողմից 21.10.2026թ տրված թվով 2 /երկու/ գույքերը հրապարակային սակարկությունների միջոցով վաճառելու թույլատրելու մասին որոշումների՝:
Աճուրդի է ներկայացվում «Քրաուն Քեմիքալ» ՍՊԸ-ին պատկանող թվով 6 տրասպորտային միջոց, թվով 21 անվանում պատրաստի արտադրանք, ինչպես նաև հումքի և նյութերի պահեստի 81 անվանում նյութեր ընդհամենը `27.229.338 ՀՀ դրամ արժեքով : Աճուրդի է ներկայացվող գույքերը բաժանված է թվով 8 առանձին լոտերի 265-ից -272 և 102 ենթալոտերի : Բոլոր շարժական գույքերը գրավադրված են «Արարատ Բանկ» ԲԲԸ-ում :
Գույքը իրենից ներկայացնում է ընկերությանը պատկանող թվով 6 ավտոմեքենաներ, որոնք անսարք են և մասամբ ապակոմլեկտացված,պահեստի պատրաստի արտադրանքի և հումքերի նյութերի մեծ մասի պիտանելիության ժամկետները անցած են, սակայն հիմք ընդունելով գնահատման հաշվետվությունները նրանց մի մասը հնարավոր է օգտագործել արտադրություններում :
Աճուրդի ներկայացված թվով 6 տրանսպորտային միջոցների և հումք նյութերի տեխնիկական,ֆիզիկական վիճակը ինչպես նաև պիտանի լինելու հանգամանքը ստուգում է գնորդը իր հաշվին: Գնված գույքերի բոլոր ապամոնտաժման և

տեղափոխման ծախսերը կատարում է գնորդը իր հաշվին : Շարժական գույքերի նկարագիրը ներկայացված է կից ցանկով :
Աճուրդը անցկացվում է ՀՀ Արդարադատության Նախարարի 16.03.2020թ-ի թիվ 116-Ն հրամանով հաստատված «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին» կարգով:Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար , ովքեր ցանկություն ունեն ներկա գտնվել աճուրդին, սահմանվում է մուտքի վճար, որի չափը կազմում է՝ 5000 ՀՀ դրամ: Ըստ կանոնակարգի՝ աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից՝ աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան արձանագրության հիման վրա, 10 օրվա ընթացքում պարտապանի սնանկության հատուկ հաշվին վճարել լոտի գնման գինը ՝ հաշվանցելով նախավճարը: Նշված 10 օրյա ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած , իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում:Գույքի առուվաճառքի պայմանագրի, դրանից ծագող իրավունքների գրանցման, գույքը գնորդին փոխանցելու, սարքերի ապամոնտաժման աշխատանքները, և պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ այլ (ցանկացած տեսակի) ծախսերը և գործողությունները կատարվում են աճուրդի հաղթող ճանաչված մասնակցի կողմից ՝ իր միջոցներով: Հաշվի առնելով Հարկային Օրենսգրքում 2026թ կատարված նոր փոփոխությունները ավտոմեքենաների վաճառքի պարագայում նրա գույքահարկը վճարում է գնորդը գնման պահին գործող հաշվարկով :
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճեն
- իրավաբանական անձանց դեպքում նրանց պետ.գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:
- աճուրդի մասնակցության և նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը, որոնք պետք է կազմեն համապատասխանաբար լոտի մեկնարկային գնի 1 % տոկոսը, բայց ոչ ավել 300.000 ՀՀ դրամը և 5% տոկոսը, պետք է վճարվեն «Այ ԴԻ Բանկ» ՓԲԸ-ի Բաղրամյան մասնաճյուղում գործող թիվ 11807052947400 սնանկության հատուկ հաշվին, և ներկայացվեն ՀՀ Սնանկության դատարան /ք.Երևան, Օտյան 53/2/ մինչև աճուրդի նախորդող 5 օրը, մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկող մասնակիցը:
Լոտերի ուսումնասիրությունների և այլ մանրամասներին ծանոթանալու համար բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքային օրերին կարող են այցելել ք.Երևան Ազատության 14-54 հասցե, ժամը 11-00–ից մինչև 18-00 նախապես զանգահարելով կառավարիչին հեռ. 010239505:Կից ներկայացվում է գույքերի ցուցակը:Կից ներկայացվում է գույքերի ցուցակը:

Քրաուն Քեմիքալ նոր գույքերի աճուրդի ցուցակ 2.PDF

37494221985

nazaryanx@mail.ru

ք. Երևան,Ազատության 14-54